# ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

## ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ 2019Թ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 1. ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

**ՆՊԱՏԱԿ 1.**Տրամադրել ուսանողի կրթական կարիքներին և աշխատաշուկայի բավարարվածությանը համահունչ կրթական ծրագրեր, հագեցած կրթական արդիական մեթոդաբանությամբ և տեխնոլոգիաներով:

| **ԽՆԴԻՐ 1.4.** Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների և գործընթացների արդյունավետությունը: | | |
|---|---|---|
| N | Քայլեր | Կատարման ժամանակահատված 2019թ. |
| 1 (3) | Ստուգումներն անցկացնել հանձնաժողովների մասնակցությամբ: | Գեղարվեստական կրթության երեք ամբիոններում համապատասխան մշակված տարեկան աշխատանքային պլաններին կատարվում են դասալսումներ, ինչի մասին գրանցումներ են կատարվում համապատասխան մատյաններում: Դասալսումներին ներկա են ամբիոնների վարիչները և մեկ դասախոս: Դասալսումների արդյունքում դրական փոփոխություններ է դասապրոցեսը: |

### ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 2. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆՊԱՏԱԿ 2.** Զարգացնել համալսարանի գիտահետազոտական գործունեությունը, ձևավորել մրցունակ գիտական և նորարարական ներուժ, աստիճանաբար անցում կատարել համալսարանի հետազոտական կարգավիճակին:

**ԽՆԴԻՐ 2.1.** Նպաստել համալսարանում գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

| N | Քայլեր | Կատարման ժամանակահատված 2019թ. |
|---|---|---|
| 1 | Կազմակերպել ամբիոնում և ֆակուլտետում գիտաժողովներ, որում մասնակցեն թե ամբիոնի, թե ֆակուլտետի մագիստրոսները, ասպիրանտները և դասախոսները: | հաշվետու տարում ֆակուլտետում կազմակերպվել է ուսանողական գիտաժողով, որին մասնակցել են ֆակուլտետի մագիստրոսները (14 մագիստրոս), որի արդյունքում տպագրվել է մագիստրոսական հոդվածների ժողովածու: |

| | | |
|---|---|---|
| 2 | Ապահովել երիտասարդ մասնագետների և մագիստրոսների գիտահետազոտական գործունեությունը: | ֆակուլտետի երիտասարդ մասնագետներն ու մագիստրոսները ներգրավված են հանրապետական գիտաժողովներում, ցուցաբերում են ակտիվ մասնակցություն, երիտասարդ մասնագետները տպագրում են հոդվածներ: |
| 3 | Երիտասարդ մասնագետներին և մագիստրոսներին ներգրավել ամբիոնի գիտական ուղղվածությանը համապատասխան հետազոտություններում: | Մագիստրոսական ատենախոսությունները ենթադրում են երիտասարդ մասնագետների ներգրավումը ամբիոնների գիտական ուղղվածության մեջ: |
| 4 | Բարձրացնել մագիստրոսական, թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների որակը, ստացված արդյունքները ներդնել գործնական շրջանառության մեջ: | Առավել ուշադրություն է դարձվում գրախոսություններին: Խրախուսվում է այլ բուհից առնվազն մեկ ներկայացուցչի գրախոսությունը՝ յուրաքանչյուր հետազոտության համար:<br>Հիմնականում ներառվում են ազգային արժեքների պահպանմանն ուղղված հետազոտական թեմաներ: |
| 5 | Նպաստել միջազգային և հանրապետական գիտաժողովներին, մրցույթներին դասախոս արվեստաբանների մասնակցության աճին: | Դասախոսները ակտիվորեն մասնակցել են հանրապետական, միջազգային ցուցահանդեսներին, գիտաժողովներին:<br>ՀՊՄՀ-ի գիտահետազոտական կենտրոնը, ինչպես նաև ամբիոնի վարիչները և դասախոսները նպաստում են ֆակուլտետների, ամբիոնների իրազեկվածությանը նպաստող միջազգային և հանրապետական գիտաժողովների, մրցույթների մասին:<br>Տարվա ընթացքում դասախոսները մասնակցել են բազմաբնույթ 3 գիտաժողովի: |
| 6 | Բարձրացնել ամբիոնի գիտական ներուժը՝ պետական և ոչ պետական կազմակերպությունների՝ թանգարանների, ցուցասրահների հետ՝ գիտական հետազոտական աշխատանքներ իրականացնելու միջոցով: | Պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ կատարված հետազոտությունները կրում են շարունակական բնույթ:<br>Մագիստրատուրայի ուսանողները կատարում են հետազոտական աշխատանքներ ընտրված թեմաների շուրջ, որոնք հաջորդ կիսամյակում կներառվեն հրատարակվող մագիստրոսական հոդվածների ժողովածույում: |
| 7 | Ապահովել արվեստաբան-գիտնականի զարգացման և կատարելագործման շարունակականությունը: | Շարունակական աշխատանքի ապահովվման նպատակով ամբիոնի արվեստաբան դասախոսներին առաջարկվում են հետազոտական աշխատանքներ, ուսումնական ձեռնարկների ստեղծում, մշակվում են դասագրքերի ստեղծման ուղիները, աշխատանքը կրում է շարունակական բնույթ: |

| | | |
|---|---|---|
| 8 | Մշակույթի մենեջմենթ մասնագիտության շրջանակներում ընտրել արդիական և կարևորագույն արդյունքների առևտրայնացման գործընթացին նպաստող հետազոտական թեմաներ: | Մշակույթի մենեջմենթ մասնագիտության շրջանակներում ուսանողներին առաջարկվել են համապատասխան թեմաներ ավարտական և մագիստրոսական աշխատանքների համար, որոնք մեծ խթան են հանդիսանում հետազոտական հետևողական և արդյունավետ աշխատանքի համար: |
| **ԽՆԴԻՐ 2.2.** Նպաստել համալսարանում գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: | | |
| N | Քայլեր | Կատարման ժամանակահատված 2019թ. |
| 1 | Նպաստել ամբիոնի արվեստաբանների գիտական արդիական մենա-գրությունների հրապարակմանը: | Ամբիոնի կողմից խրախուսվում են արդիական մենագրությունների հրապարակումները: Կատարվում են նախապատրաստական աշխատանքներ 2019թ. տպագրելու նպատակով: |
| 2 | Միջազգային բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում հրատարակել ամբիոնի դասախոսների գիտական նյութերը: | Միջազգային հոդվածները տպագրվում են բարձր վարկանիշ ունեցող գիտական պարբերականներում: |
| **ԽՆԴԻՐ 2.4.** Աջակցել մտավոր գործունեության արդյունքների փոխանցմանը և առաջանցիկ կրթափորձի տարածմանը: | | |
| N | Քայլեր | Կատարման ժամանակահատված 2019թ. |
| 1 | Կրթական մեթոդների և ծրագրերի լուսաբանում: | կրթական մեթոդները դիտարկվում են և քննարկվում են ամբիոնների նիստերում և արդյունքները ներդրվում են դասապրոցեսում: |
| 2 | Թեմատիկ դասախոսություններ հեռուստատեսությամբ: | Ապահովվել է կապը ՀՊՄՀ լրատվության բաժնի հետ:<br>«Հաջողության բանաձև» ծրագրի շրջանակներում նկարահանվել և ցուցադրվել է հինգ հաղորդում: |
| 3 | Նպաստել ամբիոնի գիտակրթական գործունեության առաջ մղմանը դեպի շուկայական հարաբերություններ /լեկցիոն դասընթացներ, ցուցահանդեսների կազմակերպում, գործերի գնահատում, գովազդում և այլն/: | Կազմակերպվել են Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանողների նորաձևության ավարտական ցուցադրումներ, կերպարվեստ և գծագրություն, դեկորատիվ-կիրառական արվեստի բաժինների աշխատանքների ցուցահանդեսներ, երաժշտական կրթություն բաժնի ուսանողները կազմակերպել և մասնակցել են բազմաթիվ համերգների, ինչպես դասարանական, այնպես էլ մենահամերգների:<br>Ուսանողները մասնակցել են մենեջմենթային և գովազդային աշխատանքների: |

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 3: ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

**ՆՊԱՏԱԿ:** Զարգացնել համալսարանի մարդկային ռեսուրսների համակազմը, ապահովել որակյալ դասախոսական ներուժ և բարեկեցության մակարդակ, ժամանակակից աշխատանքային միջավայր:

**ԽՆԴԻՐ 3.1.** Շարունակել համալրել պրոֆեսորադասախոսական կազմը՝ կրթական ծրագրերի որակի ապահովման արդի պահանջներին

համահունչ:

| N | Քայլեր | Կատարման ժամանակահատված 2019թ. |
|---|---|---|
| 1 (4) | Կազմակերպել դասախոսների վերապատրաստում՝<br>○ տիրապետելու կրթական նոր տեխնոլոգիաներին, դասավանդման ինտերակտիվ մեթոդներին,<br>○ մշակելու և իրականացնելու էլեկտրոնային ուսուցման դասընթացներ,<br>իրականացնելու կրթական բարեփոխումներ և զարգացնելու որակի մշակույթ: | Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոսները մասնակցել են էլեկտրոնային դասընթացների, ինչը հետագայում կնպաստի գործընթացի բարելավմանը:<br>Որակի մշակույթը զարգացվում է հետևողական աշխատանքի արդյունքում |

**ԽՆԴԻՐ 3.2.** Զարգացնել համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը, նպաստել վարչակազմի շարունակական համալրմանն ու որակական առաջընթացին:

| N | Քայլեր | Կատարման ժամանակահատված 2019թ. |
|---|---|---|
| 1 | Իրականացնել ամբիոնի աշխատակազմի փուլային երիտասարդացման քաղաքակա-նություն, ստեղծել կայուն ռեզերվ և մրցակցային միջավայր: | Աշխատանքները կատարվում են յուրաքանչյուր ուսումնական տարի: |
| 2 | Նպաստել ամբիոնի շահերի և կոլեկտիվ պատասխանատվության, լավագույն ավանդույթների պահպանմանն ու դրանց շարունակականության ապահովմանը: | Բոլոր ուսունմնական և ավարտական աշխատանքները միտված են պահպանելու և վերհանելու ազգային արժեքները: Ֆակուլտետի գործունեությունը միտված է ոչ միայն նորարարական գործընթացն ապահովելուն այլև կամուրջ հաստատելու ներկայի և անցյալի արվեստագետների միջև:<br>Ֆակուլտետում ազգային արժեքների պահպանման շրջանակներում ստեղծվել է երկու ցուցասրահ-լսարան: |

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 4: ԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂՆԵՐ

**ՆՊԱՏԱԿ:** Կրթական գիտությունների ոլորտում ուսումնառողների մասնագիտական կողմնորոշում: Ապագա դիմորդների նախա-բուհական աջակցման (ուղեկցման, ուղղորդման) համակարգի զարգացում: Ուսումնառողների ներգրավում և առաջընթացի ապահովում համալսարանական միջավայրում:

**ԽՆԴԻՐ 4.1.** Համալսարանի՝ որպես սոցիալական կողմնորոշում ունեցող բուհի դրական վարկանիշի ստեղծում՝ ի նպաստ դիմորդների ներգրավման:

| N | Քայլեր | Կատարման ժամանակահատված 2019թ. |
|---|---|---|
| 1 | Ամբիոնի աշխատակիցների ուժերով իրականացնել մշակութային ու կրթական հաստատությունների հետ կրթական և մշակութային ուղղվածությամբ համատեղ նախագծեր: | Մի շարք ուսումնական հաստատությունների հետ համատեղ կազմակերպվել են մասնագիտական կողմնորոշմանն ուղված հանդիպումներ ֆակուլտետում: Կազմակերպվել են «Բաց դռների օր» միջոցառումները: Կազմակերպվել են աշակերտական ցուցահանդեսներ: Գործընթացը կրում է շարունակական բնույթ:<br>Համագործակցային կապեր են հաստատվել Հայաստանի նկարիչների միության հետ և Երևանի գեղարվեստի ակադեմիայի միջև:<br>Վերանայվել են թանգարանային պրակտիկայի ծրագրերն ու պլանները, աշխատանքներ են կատարվում պրակտիկայի բազաներն ընդլայնելու նպատակով: |
| 2 (3) | Ուղարկել նամակ - հրավերներ Երևանի ու հանրապետության մարզերի ավագ դպրոցների աշակերտներին՝ կողմնորոշվելու մասնագիտության ընտրության մեջ և մասնակցելու ամբիոնի միջոցառումներին: | Հայաստանի շրջանների պետական քոլեջներ են ուղարկվել գովազդային փաթեթներ՝ ազդ և մասնագիտությունները լուսաբանող բուկլետներ: |
| 3 (4) | Բարձրացնել ամբիոնի դրական վարկանիշը և նպաստել արվեստաբանի, մշակութաբանի և արտ-մենեջերի մասնագիտությունների մասսայականացմանը: | Այցերի ժամանակ դասախոսների կողմից կատարվել են ֆակուլտետի՝ երաժշտության ուսուցչի, արվեստաբանի, մշակութաբանի և արտ-մենեջերի մասնագիտությունների մասսայականացմանը նպաստող նյութերի ներկայացում: |
| 4 (5) | Կազմակերպել ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական կազմի մասնագիտական, գիտական, մշակութային ձեռքբերումների շնորհանդես: | Կազմակերպվել են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական շնորհանդեսներ, ցուցահանդեսներ և համերգներ: |
| 5 (6) | Ապահովել ամբիոնի ուսանողների ներգրավվածությունը շարունակական կրթական ծրագրերի /մանկական կենտրոններ, բանավեճ ակումբներ և այլն/ իրականացման գործում: | Պարբերաբար կազմակերպվում են համապատասխան միջոցառումներ: |
| 6 (7) | Բաց դասերի կազմակերպում, համատեղ ցուցահանդեսների, վարպետաց դասերի կազմակերպում: Փորձի փոխանակման ապահովում միջին մասնագիտական հաստատություններում, դրանով իսկ ապագա դիմորդների մասնագիտական կողմորոշման խթանում: | Շրջայցերի ընթացքում ֆակուլտետի դասախոսների կողմից կազմակերպվել են դասախոսություններ համապատասխան մասնագիտությունների շրջանակներում: |
| **ԽՆԴԻՐ 4.2**. Մշակել և կազմակերպել աշակերտների շրջանում ուսուցչի մասնագիտության գրավչության ամրապնդմանը, մանկավարժական կողմնորոշում ունեցող դիմորդների | | |

| | | |
|---|---|---|
| ներգրավմանը նպաստող միջոցառումներ: | | |
| N | Քայլեր | Կատարման ժամանակահատված 2019թ. |
| 1 | Մշակել ու կազմակերպել դպրոցականների համար արվեստաբանությամբ, մշակութաբանությամբ, կերպարվեստի, երաժշտությամբ և արտ-մենեջմենթի խնդիրներով հետաքրքվածության մակարդակի աճին նպաստող միջո-ցառումներ (առարկայական օլիմպիադաներ, ինտելեկտուալ խաղեր, մրցույթներ, ցուցահանդեսներ, աճուրդներ, համերգներ և այլն): | Միջոցառումներ են կազմակերպել Երևանի դպրոցներում: ՀՊՄՀ հենակետային վարժարանի մշակութային հոսքի դասարանում: |
| **ԽՆԴԻՐ 4.3.** Հանրակրթական հաստատությունների՝ մանկավարժական կրթություն ստանալու միտված շրջանավարտների նախաբուհական աջակցման (ուղեկցման, ուղղորդման) համակարգի ստեղծում, նախաբուհական նախապատրաստման գործընթացում ընդգրկված մանկավարժներին մեթոդական օգնության ցուցաբերում: | | |
| N | Քայլեր | Կատարման ժամանակահատված 2019թ. |
| 1 | Կրթական մեթոդների և ծրագրերի լուսաբանում: | Դիտարկվել են ֆակուլտետ ներկայացված ծրագրերը, դրանց արվել են դիտողություններ, կազմակերպվել են հանդիպումներ, որոնց արդյունքում շտկվել են ծրագրերը: |
| 2 (3) | Արդի կրթական մեթոդների և միջոցների ներկայացումը հանրությանը: | Նկարահանվել են մի շարք լրատվական նյութեր: (5 հաղորդում)<br>Կազմակերպվել են ցուցահանդեսներ, որոնք լուսաբանվել են զլմ-ներում : |
| 3 (4) | Անցկացնել տեսական և գործնական մանկավարժական արդիական խնդիր-ներին նվիրված հանդիպումներ, սեմինարներ, կոնֆերանսներ: | Հանդիպում է անցկացվել «Դասավանդիր, Հայաստան» ծրագրի շրջանակներում: |
| **ԽՆԴԻՐ 4.4.** Մշակել միջոցառումների համակարգ, որը կնպաստի ուսումնառողների (բակալավր և մագիստրատուրա) շրջանում ուսանողական կազմակերպությունների դերի բարձրացմանը և ուսանողական ինքնավարության ընդլայնմանը՝ նպաստելով ուսանողակենտրոն համակարգի զարգացմանը: | | |
| N | Քայլեր | Կատարման ժամանակահատված 2019թ. |
| 1 | Ապահովել ամբիոնի համագործակցությունը ֆակուլտետի այլ ամբիոնների հետ մշակութային ծրագրերի իրականացման մեջ: | Կազմակերպվել են միջամբիոնային ուսանողական ցուցահանդեսներ: Տպագրվել է ֆակուլտետի մագիստրոսների հոդվածների ժողովածու: |
| 2 (3) | Ամբիոնում և ֆակուլտետում ակտիվ մշակութային կյանք, որում ընդգրկված են ինչպես դասախոսներ, այնպես էլ ուսանողներ | ֆակուլտետում բացվել է երկու ցուցասրահ-լսարան, ինչը նպաստում է ուսանողության և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ոգևորությանը: |
| **ԽՆԴԻՐ 4.5.**Բարձրացնել ՀՊՄՀ-ում ուսումնառությունից և ուսանողական օժանդակ ծառայություններից ուսանողների գոհունակության մակարդակը: | | |

| N | Քայլեր | Կատարման ժամանակահատված 2019թ. |
|---|---|---|
| 1 (3) | Նպաստել ամբիոնի, ֆակուլտետի, ինստիտուտի ուսանողների ստեղծագործական և միջանձնային շփման հմտությունների ձևավորմանը. կազմակերպել սեմինարներ, բանավեճեր, փնտրել շփման այլ ձևաչափեր: | Կատարվել են համապատասխան աշխատանքներ: Ցուցադրություններին և համերգներին հրավիրվում են հարակից ֆակուլտետների ուսանողներ, այդ միջոցառումները և հատկապես մտքերի փոխանակումը նպաստում է միջանձնային շփմանը: |
| 2 (4) | Խրախուսել ուսանողական կազմակերպություններում ակտիվ և որակյալ գործունեություն ծավալող լավագույն ուսանողների: | 1 ուսանող՝ միջբուհական լավագույն ուսանող մրցույթին: Ֆակուլտետի մի քանի լավագույն ուսանողներ մասնակցել են ամառային դպրոց միջազգային ծրագրին: Ուսանողները դասախոսների խրախուսմամբ կազմակերպում են իրենց պրակտիկայի արդյունքների հիման վրա աշակերտական ցուցահանդեսներ, որոնք կրում են շարունակական բնույթ: |

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 5.** **ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ**

**ՆՊԱՏԱԿ 5.**Բարելավել համալսարանի կառավարման համակարգը և նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը: Ապահովել համալսարանի ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքերը և բարձրացնել դրանց կառավարման արդյունավետությունը: Դառնալ նախաձեռնող համալսարանի ֆինանսավորման այլ ընտրանքային աղբյուրների որոնման և դրանց բազմազանեցման հարցերում: Ձևավորել ժամանակակից պահանջները բավարարող համալսարանական ենթակառուցվածքներ:

| **ԽՆԴԻՐ 5.2.**Որակի կառավարման համակարգի զարգացում և դրա արդյունավետության բարձրացում համաշխարհային չափանիշների /TQM/ հիման վրա: | | |
|---|---|---|
| N | Քայլեր | Կատարման ժամանակահատված 2019թ. |
| 1 (3) | Ապահովել ընթացիկ և հանրագումարային ստուգողական աշխատանքների անցկացման թափանցիկությունը; | Ընթացիկ և հանրագումարային ստուգողական աշխատանքների անցկացման թափանցիկությունը ապահովելու նպատակով պարբերաբար ամբինի վարիչը կազմակերպում է ստուգայցեր, գործընթացը կարելի է դիտարկել classroom համակարգով և բաց դասերի միջոցով: |
| 2 (4) | Ստուգումներն անցկացնել հանձնաժողովների մասնակցությամբ; | Դասալսումները, ամփոփիչ ստուգումները կատարվում են ընթերակա դասախոսի ներկայությամբ: |

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 6:** **ՀԱՆՐԱՅԻՆՆԵՐԳՐԱՎՈՒՄ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԵՎԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ՆՊԱՏԱԿ:** Աջակցել հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացին՝ նպաստելով Համալսարանի ու

նրա գործունեության ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը:

**ԽՆԴԻՐ 6.1.** Ապահովել հասարակության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային ծրագրերում համալսարանի առավելագույնս ներգրավումը:

| N | Քայլեր | Կատարման ժամանակահատված 2019թ. |
|---|---|---|
| 1 | Համալսարանի կայքէջում արվեստաբանության, մշակութաբանության, երաժշտության և արթ –մենեջմենթի վերաբերյալ օպերատիվ լրատվության և սեփական գովազդային նյութերի հրապարակում: | Համալսարանի կայք էջում տեղադրվել են մասնագիտությունները լուսաբանող տեսաերիզներ, ֆակուլտետի միջոցառումները լուսաբանող նյութեր: |
| 2 | Ապահովել հասարակության հետ կապերի հետագա զարգացում: Ամբիոնի դասախոսների անհատական, խմբային, ինչպես նաև ուսանողների հետ համատեղ ցուցահանդեսների կազմակերպում: | Կազմակերպվել են բազմատիվ ցուցահանդեսներ թե ֆակուլտետի ներսում թե համալսարանից դուրս գտնվող ցուցասրահներում: Բացված ցուցասրահ-լսարանները նպաստում հասարակության հետ կապերի ամրապնդմանը: |

**ԽՆԴԻՐ 6.2.** Բազմազանեցնել գործընկերային կապերը համալսարանի պատվիրատու կազմակերպությունների և հանրապետական հանրային կառույցների հետ:

| N | Քայլեր | Կատարման ժամանակահատված 2019թ. |
|---|---|---|
| 1 | Կազմակերպել հանդիպումներ մասնագիտական հաջողություններ արձանագրած Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի շրջանավարտների և ուսանողների միջև: | Գործընթացը իրականացվել է ուսանողական գիտաժողովի շրջանակներում:<br>Մասնագիտացում ստացած լավագույն ուսանողները դասավանդում են ամբիոնում: |

**ԽՆԴԻՐ 6.3**. Զարգացնել համալսարանի հիմնական սոցիալական ծրագրերը, ապահովել սոցիալական ծառայությունների պահպանումն ու պայմանների բարելավումը:

| N | Քայլեր | Կատարման ժամանակահատված 2019թ. |
|---|---|---|
| 1 | Նպաստել ամբիոնի աշխատակիցների և ուսանողությանը համալսարանում մշակութային և մարզական ծրագրերի համակողմանի զարգացմանը: | Ֆակուլտետի ուսանողները մասնակցում են համալսարանական մարզական ծրագրերին, լավագույն ընթերցող միջոցառմանը: |
| 2 | Խթանել ուսանողների և աշխատողների ակտիվ մասնակցությունը համալսարանի մշակութային և մարզական կյանքին: | Ուսանողները ակտիվ մասնակցություն են ցուցաբերել համահամլսարանական միջոցառումներին: Մասնակցել են նաև մարզական միջոցառումներին և ստացել են մրցանակներ: |

| | | |
|---|---|---|
| 3 | Ապահովել ամբիոնի համագործակցությունը ֆակուլտետի այլ ամբիոնների հետ մշակութային ծրագրերի իրականացման մեջ: | Ֆակուլտետի ամբիոնները համագործակցում են գրեթե բոլոր միջոցառումների ժամանակ և այդ գործըթացը կրում է շարունակական բնույթ: |
| 4 | Ամբիոնում և ֆակուլտետում ակտիվ մշակութային կյանք, որում ընդգրկված են ինչպես դասախոսներ, այնպես էլ ուսանողներ: | կազմակերպվել են համատեղ ցուցահանդեսներ և համերգներ, կազմվում է համատեղ հոդվածների ժողովածու, գոծընթացը կրում է շարունական բնույթ: |

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 7: ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

**ՆՊԱՏԱԿ 7.**Ապահովել համալսարանի արտաքին կապերի համակողմանի զարգացումը, խթանել ՀՊՄՀ գործունեության միջազգայնացումը:

**ԽՆԴԻՐ 7.1.**Ընդլայնել և բազմազանեցնել համալսարանի միջազգային կապերը, խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում:

| N | Քայլեր | Կատարման ժամանակահատված 2019թ. |
|---|---|---|
| 1 (3) | Խրախուսել մրցակցությունը ուսանողության մեջ և ակտիվացնել, զարգացնել և ընդլայնել նրանց մասնակցությունը միջազգային ամառային դպրոցի դասընթացներին: | Ֆակուլտետի ուսանողության շրջանում տիրում է մրցակցային մթնոլորտ, ինչը նպաստում է կրթական որակների բարձրացմանը: Խրախուսվում են օտար լեզվի պարապմունքները, հետագայում Ամառային դպրոց ծրագրին մասնակցելու համար:<br>Կրում է շարունակական բնույթ: |
| **ԽՆԴԻՐ 7.2.** Ընդլայնել համալսարանի միջազգային գիտական համագործակցությունը, ձգտել համալսարանի ներգրավվմանը եվրոպական հետազոտական տարածքին: | | |
| N | Քայլեր | Կատարման ժամանակահատված 2019թ. |
| 1 | Որոնել կապեր ամբիոնի և արտասահմանյան առաջատար համալսարանների և գիտական կենտրոնների համապատասխան բաժինների կամ առանձին արվեստաբան-գիտնականների հետ, համատեղ նախագծերի նախաձեռնման նպատակով: | Ստեղծվել են համագործակցության արդյունավետ նախապայմաններ: Աշխատանքները հայեցակարգային փուլում են: Աշխատանքներ են տարվում միջբուհական ցուցահանդեսների կազմակերպման, գիտաժողովների, սեմինարների անցկացման նպատակով: |
| **ԽՆԴԻՐ 7.3.**Նպաստել օտարերկրյա ուսանողների համակազմի աճին ՀՊՄՀ-ում: | | |
| N | Քայլեր | Կատարման ժամանակահատված 2019թ. |

| | | |
|---|---|---|
| 1 | Նպաստել ամբիոնի ուսանողական հանրությանը և օտարերկրյա ուսանողների լիարժեք ինտեգրմանը. | Ֆակուլտետի ուսանողների միջավայրում աշխատանքներ են տարվում օտարերկրյա ուսանողների հետ լիարժեք շփման ուղղությամբ: Առաջ են քաշվում հանդուրժողականության, հարգանքի հիմնահարցերը: Աշխատանքները կատարվում են ամբիոնների վարիչների և ողջ դասախոսական անձնակազմի ուժերով:<br>ֆակուլտետում կարճատև դասապրոցեսին մասնակցել են հինգ ճապոնացի ուսանող: |
| 2 | Օտարերկրյա ուսանողներին հրավիրել սեմինարների, պատկերահանդեսների, հետաքրքիր լեկցիոն դասընթացների, բացահայտել և հաշվի առնել նրանց հետաքրքրվածությունը արվեստի խնդիրներով և օգնել ճիշտ կողմնորոշվել մասնագիտության ընտրման հարցում | Աշխատանքներ են տարվում օտարերկրյա ուսանողների համակազմի աճման հարցի շուրջ: Աշխատանքները կրում են շարունակական բնույթ: |
| 3 | Հանձնարարել ամբիոնի ուսանողությանը կապեր հաստատել հայաշատ երկրներից սփյուռքահայ երիտասարդության հետ: | Աշխատանքներին ներգրավվել են ուսխորհրդի անդամները, կուրսերի ավագներին տրվել են համապատասխան հանձնարարականներ: |
| 4 | Սփյուռքահայ երիտասարդությանը հրավիրել Հայաստան մասնակից լինելու բազմաթիվ մշակութային միջոցառումների, այդ թվում նաև ամբիոնի ուժերով կազմակերպված: | Տրվել են համապատասխան հանձնարարականներ: |
| 5 | Գովազդել նկարչի, արվեստաբանի, երաժիշտի և արթ-մենեջերի մասնագիտությունը՝ խթանելով դիմորդների ներհոսքը: Այդ նպատակի համար օգտագործել նաև ամառային դպրոցը: | Կատարվում են համապատասխան աշխատանքներ: Կազմակերպվել են մի շարք միջոցառումներ: Ամառային դպրոցում գովազդային գործունեությունից բացի օգտագործվում են և ուսանողական և դասախոսական անձնակազմի կապերը: Գործընթացը կրում է շարունակական բնույթ: |